ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ • ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

# «ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆ»
## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ



ROUND SQUARE

COLEGIO DEL MUNDO • WORLD SCHOOL • ÉCOLE DU MONDE

CIS MEMBER

ՃԵՄԱՐԱՆ
LYCEUM

# «Ծիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր

## ԿՐՏՄԵՐ ԴՊՐՈՑԻ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | |
|---|---|---|
| 1. | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ | 3 |
| 2. | ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ | 5 |
| 3. | 2-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ | 7 |
| 4. | ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ | 8 |
| 5. | ՊԱՅՄԱՆԱԳԻՐ | 8 |
| 6. | ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ | 8 |
| 7. | ՀԱՎԵԼՎԱԾ | 9 |

Հայաստանում Միջազգային բակալավրիատի (International Baccalaurate – IB) (այսուհետ՝ ՄԲ)՝ նախադպրոցական-տարրական, միջին և ավագ տարիքային խմբերի ծրագրերով հավատարմագրված միակ հաստատությունը՝ «**Շիրակացու Ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրը (այսուհետ՝ Ճեմարան)**, կատարում է մրցութային ընդունելություն Հայաստանի, Սփյուռքի և արտերկրի նախադպրոցական տարիքի երեխաների և հանրակրթական դպրոցների շնորհալի սովորողների համար՝ ՀՀ պետական և միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխանող բարձրակարգ և լիարժեք կրթություն ապահովելու նպատակով:

***Ճեմարանի առաքելությունն է կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական և քաղաքացի:***

**2010թ.-ից Ճեմարանը** ***«Ռաունդ Սքվեր» (Round Square) միջազգային դպրոցների համաշխարհային ասոցիացիայի լիիրավ անդամ է: 2008թ.-ից Ճեմարանը ԱՊՀ երկրների ՄԲ դպրոցների ասոցիացիաի լիիրավ անդամ է:***

***2013թ. Ճեմարանի մանկակրթարան-տարրական դպրոցը (այսուհետ՝կրտսեր դպրոց), 2014թ.՝ միջին և ավագ դպրոցները հավատարմագրվել են ՄԲ համաշխարհային գրասենյակի կողմից:***

***1990թ.-ից Ճեմարանում իրականացվում է «Շնորհալի երեխաների բացահայտման, նրանց կրթության կազմակերպման և օժտվածության խնդիրների հետազոտման» հեղինակային կրթական ծրագիրը (հաստատված է ՀՀ կառավարության կողմից): 2014թ. նշված ծրագիրը ընդլայնվել և վերահաստատվել է ՀՀ ԿԳ նախարարության կողմից և ներկայումս լիարժեք ինտեգրում է ՀՀ պետական չափորոշչի և ՄԲ համապատասխան տարիքային ծրագրերի պահանջները:***

***Բացի վերոնշյալից՝ՀՀ կառավարության որոշմամբ արտոնվել է իրականացնել 11-12-րդ դասարաններում ՄԲ դիպլոմային ծրագիրը (ՄԲ ԴԾ, IB DP)՝անգլերենով:***

***2010թ. «Մայքրոսոֆթ» ընկերության համաշխարհային գրասենյակի կողմից Ճեմարանը ճանաչվել է աշխարհի 56 ամենաառաջատար նորարար դպրոցներից մեկը:***

1. Ճեմարանի բոլոր կառույցներում ուսուցումը կատարվում է վճարովի հիմունքներով, բացառությամբ 5-12-րդ դասարանների համար սահմանված քանակությամբ մասնակի պետական սուբսիդավորմամբ (այսուհետ՝ պետական համաֆինանսավորում) տեղերի, որտեղ ուսուցումը համաֆինանսավորվում է ծնողի և պետության կողմից:

2. Ճեմարանի կրթական կառույցներն են.
   2.1. **մանկակրթարան** (3- 5 տարեկաններ)
   2.2. **կրտսեր դպրոց** (1- 4-րդ դասարաններ)
   2.3. **միջին դպրոց** (5-10-րդ դասարաններ)

   *10-րդ դասարանում ուսուցումը կազմակերպվում է չորս հոսքերով (հումանիտար, բնագիտական, տնտեսագիտական, ֆիզմաթ):*

   2.4. **ավագ դպրոց** (11-12-րդ դասարաններ).

   *11-12-րդ դասարաններում ուսուցումը կազմակերպվում է առարկաների լայն ընտրությամբ տարբերակված հոսքերով և/կամ ՄԲԴԾ ծրագրով՝անգլերենով:*

3. Սովորողների հաշվարկային թիվը կրտսեր դպրոցի խմբերում սահմանվում է 15, միջին և ավագ դպրոցների խմբերում՝ 18: Ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպվում է երկարացված օրվա աշխատակարգով: Սովորողներն ապահովվում են սննդով՝ ըստ հաստատված սննդակարգի: Անհրաժեշտության դեպքում՝ կարող է տրամադրվել հանրակացարան: Բոլոր սովորողների տեղափոխումը կատարվում է Ճեմարանի կողմից՝ ***<u>հատուկ տրանսպորտային միջոցներով, իսկ մանկակրթարանում և կրտսեր դպրոցում՝ համապատասխան մանկավարժների ուղեկցությամբ</u>***:

## 1. ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

1. Առաջին դասարան կարող են ընդունվել մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ 6 տարին լրացող երեխաները:
2. Ընդունելության դիմումները և անհրաժեշտ փաստաթղթերի ներբեռնումը կատարվում է դիմումների առցանց գրանցման համակարգի միջոցով (հղումը տեղադրված է Ճեմարանի պաշտոնական կայքի (https://shirakatsy.am/) «Ընդունելություն» բաժնում):
3. Ընդունելության դիմումներն ընդունվում են 7-րդ կետում սահմանված ժամկետներում:
4. Դիմում-հայտերի ընդունման և ընդունելության գործընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է վճարել ընդունելության կանոններով սահմանված չափով քննավարձ, որի մասին տեղեկատվությունը նույնպես տեղադրված է Ճեմարանի պաշտոնական կայքի (https://shirakatsy.am/) «Ընդունելություն» բաժնում:
5. Ընդունելությունը կատարվում է հաշվի առնելով դիմորդ երեխաների՝ դպրոցին հոգեբանական պատրաստվածության հետազոտության արդյունքները, որն իրականացվում է դիմումների ընդունման հաջորդ օրվանից սկսած, մինչև 2026 թվականի մայիսի 20-ը, եթե Ճեմարանի պաշտոնական կայքում այլ ժամկետ նշված չէ, ինչպես նաև սույն կարգի 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված այլ հանգամանքները:
6. Եթե ներկայացված դիմումի հիման վրա սույն Կանոնների 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով նախատեսված հանգամանքների հաշվառմամբ, Ճեմարանը հնարավոր չի համարում երեխայի ընդունելությունը և ծնողի հետ պայմանագրի կնքումը, ապա ծնողը անմիջապես ծանուցվում է դրա մասին, իսկ երեխան չի թեստավորվում: Սույն 6-րդ կետը որևէ կերպ չի բացառում սույն Կանոնների 13-րդ կոտի ա), բ) ենթակետերով նախատեսված հանգամանքների դիտարկումը նաև դիմորդ երեխայի թեստավորումից հետո:

7. Ընդունելության դիմումներն ընդունվում են երկու փուլով՝
   7.1. **փետրվարի 1-10-ը,** եթե Ճեմարանի պաշտոնական կայքում այլ ժամկետ նշված չէ՝ հետևյալ դիմորդների համար.
      - **մանկակրթարանի ավագ խմբի երեխաներ**
      - **Ճեմարանում սովորող քույր կամ եղբայր ունեցող երեխաներ** *(«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1.1 մասի 1-ին կետ առաջնահերթության իրացման նպատակով)*
      - **Ճեմարանի աշխատակիցների երեխաներ** *(«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1.1 մասի 2-րդ կետ առաջնահերթության իրացման նպատակով):*
   *7.2.* **մարտի 10-15-ը,** եթե Ճեմարանի պաշտոնական կայքում այլ ժամկետ նշված չէ՝ նոր դիմորդների համար:
8. Սույն կարգի 7.1. կետում նշված դիմորդների համար ընդունելության համար բավարար պայման է դպրոցին հոգեբանորեն պատրաստվածության թեստի նվազագույն շեմի հաղթահարումը: Մյուս դիմորդների ընդունելությունն իրականացվում է մրցութային սկզբունքով՝ հետազոտության արդյունքում հավաքած առավելագույն միավորների հիման վրա: Այդուհանդերձ, բոլոր դիմորդների համար հաշվի են առնվում նաև սույն կարգի 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված հանգամանքները:
9. Եթե սույն կարգի 7.1. կետով նախատեսված դիմորդների թիվը գերազանցում է առաջին դասարանի համար սահմանված տեղերի քանակը, ապա **Ճեմարանում սովորող քույր կամ եղբայր ունեցող երեխաների և Ճեմարանի աշխատակիցների երեխաների** ընդունելությունն իրականացվում է մրցութային սկզբունքով՝ դպրոցին հոգեբանական պատրաստվածության թեստի արդյունքում հավաքած առավելագույն միավորների հիման վրա:

10. Առաջին դասարանի սաների քանակը համալրվում է նախ Ճեմարանի մանկակրթարանի ավագ խմբի սովորողներից, Ճեմարանում սովորող քույր կամ եղբայր ունեցող և Ճեմարանի աշխատակիցների երեխաներից, որից հետո մնացած թափուր տեղերի համար տրվում է հայտարարություն ընդունելության դիմումների երկրորդ փուլի համար: Եթե սահմանված տեղերը լրանում են սույն կարգի 7.1. կետում նշված դիմորդներով, դիմումների ընդունման երկրորդ փուլ չի նախատեսվում և չի անցկացվում, բացառությամբ սույն կարգի 14-րդ կետով նախատեսված դեպքերի:
11. Սույն կարգի 7.1 կետով սահմանված դիմորդների կողմից դպրոցին հոգեբանորեն պատրաստվածության թեստի նվազագույն շեմը չհաղթահարելու դեպքում առաջացած թափուր տեղերը հատկացվում են սույն կարգի 7.2. կետով նախատեսված նոր դիմորդ ընտանիքների երեխաներին:
12. Դիմումների ընդունման առաջին փուլից ուշացած և երկրորդ փուլով դիմում ներկայացրած մանկակրթարանի ավագ խմբի սովորողները, Ճեմարանում սովորող քույր կամ եղբայր ունեցող և Ճեմարանի աշխատակիցների երեխաները մասնակցում են սույն կարգի 7.2 կետով նախատեսված դիմորդների համար անցկացվող մրցույթին՝ վերջիններիս հատկացված տեղերի քանակի շրջանակներում:
13. Սույն կարգի 8-րդ կետով նախատեսված արդյունքների հիման վրա երեխային ընդունելու և ծնողի հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ որոշում կայացնում է Ընդունող հանձնաժողովը: Ընդ որում, երեխայի՝ հոգեբանորեն պատրաստվածության թեստի նվազագույն շեմի հաղթահարումը կամ հետազոտության արդյունքում առավելագույն միավորներ հավաքելը հաշվի է առնվում Ընդունող հանձնաժողովի կողմից մի շարք այլ հանգամանքների հետ մեկտեղ, այդ թվում՝ Ընդունող հանձնաժողովը գնահատում է՝

(ա) նախկինում Ճեմարանի հետ պայմանագրային հարաբերություններում գտնվող ծնողի կողմից իր

պարտավորությունների պատշաճ կատարումը և/կամ ըստ երեխայի կարիքների՝ համագործակցումը Ճեմարանի հետ,

(բ) երեխայի առանձնահատկություններով պայմանավորված կրթական կարիքների ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը:

14. Չնայած սույն կարգով սահմանված ընդհանուր կանոններին՝ առաջին դասարանի թվով հինգ տեղերի բաշխման լիազորությունը պատկանում է Ընդունող հանձնաժողովին, որը որոշում է կայացնում Ճեմարանի տնօրենի ներկայացմամբ՝ բացառիկ դեպքերում (հոգեբանական կամ մանկավարժական առանձնահատկությունների առկայություն, երեխայի յուրահատուկ կարողություններ, որոնք չեն արտացոլվել ստանդարտ գնահատման արդյունքում, հատուկ կրթական կարիքներ կամ հանգամանքներ, Ճեմարանի զարգացման ռազմավարական շահերից բխող նկատառումներ և այլ խնդրահարույց դեպքեր, որոնք պահանջում են անհատական մոտեցում):

15. Բոլոր դիմորդների ծնողները տեղեկանում են երեխայի՝ դպրոցին հոգեբանորեն պատրաստվածության թեստի արդյունքների մասին թեստավորման հաջորդ օրը, իրենց տրամադրված անհատական թվային կոդի միջոցով:

16. Ընդունելության փուլը հաղթահարած բոլոր դիմորդ երեխաների ծնողները տեղեկանում են Ճեմարանի որոշման մասին անհատապես, բոլոր թեստավորումների ավարտից հետո 5-օրյա ժամկետում:

17. Ընդունելությունը հաղթահարած դիմորդների ծնողները (օրինական ներկայացուցիչները), երեխայի ընդունելության վերաբերյալ տեղեկատվությունը ծնողի կողմից տրամադրված էլեկտրոնային հասցեով ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր են պատասխան նամակով հաստատել տեղեկատվության ստացումը, ուղարկել պայմանագրի լրացված Հավելված 2-ը և վճարել 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ երեխայի ընդունելության տեղն ամրագրելու վճար՝ արտահայտելով իրենց համաձայնությունը պայմանագրի կնքման վերաբերյալ: Ամրագրման վճարը պայմանագրի կնքումից և

երեխայի ուսումնառությունը սկսելուց հետո հաշվանցվում է երեխայի ուսման վարձավճարի առաջին վճարման ենթակա մասից։ Եթե ամրագրման վճարի փոխանցումից հետո ծնողը հրաժարվում է երեխայի առաջին դասարանում երեխայի ուսումնառությունը կազմակերպելուց կամ չի ստորագրում պայմանագիրը, ապա ամրագրման վճարը չի վերադարձվում։ Ծնողի կողմից նշված ժամկետում հետադարձ կապ չապահովելու և/կամ պայմանագիրը չստորագրելու դեպքում առաջացած թափուր տեղերը համալրվում են սույն կարգի 17-րդ կետում նշված պահեստային ցանկից։

18. Դպրոցին հոգեբանորեն պատրաստվածության հետազոտության թեստի նվազագույն շեմը հաղթահարած, սակայն մրցութային ընդունելությունը չանցած նոր դիմորդ երեխաները ընդգրկվում են ընդունելության պահեստային ցանկում՝ հետագայում թափուր տեղերի առկայության դեպքում ըստ իրենց հերթի դիտարկվելու համար։
19. Խմբերի համալրումը հնարավորության սահմաններում իրականացվում է աղջիկների և տղաների թվի հավասարության սկզբունքով։
20. Խմբերի համակազմավորումն իրականացվում է կրտսեր դպրոցի հոգեբանական ծառայության կողմից. հաշվի են առնվում երեխաների թեստավորման արդյունքները, աղջիկների և տղաների հարաբերակցությունը խմբում, մանկակրթարանի սաների բաշխվածությունը առաջին դասարաններում։
21. Խմբի ավագ մանկավարժները (դասվարները) պատահականության սկզբունքով վիճակահանությամբ ընտրում են արդեն ձևավորված խմբի համարը ուստարվա մեկնարկից անմիջապես առաջ։
22. Ընդունելությանն առնչվող չնախատեսված հարցերը վճռվում են ընդունող հանձնաժողովի կողմից։

## 2. 2-4-րդ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Կրտսեր դպրոցի 2-4-րդ դասարանների համար ընթացիկ ընդունելությունը կազմակերպվում է թափուր տեղերի առկայության դեպքում, ծնողի դիմումի (լրացնել կայքում սպասման թերթիկը) և մայրենի, ռուսերեն, օտար լեզու, մաթեմատիկա առարկաների գիտելիքների ստուգման, ինտելեկտի ընդհանուր զարգացման մակարդակը գնահատող թեստի արդյունքների հիման վրա: Ընդունելության բավարար պայման է նվազագույն շեմի հաղթահարումը:

## 3. ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ (Առաջին դասարան)

Ընդունելությանը մասնակցելու համար անհրաժեշտ է առցանց ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում-հայտ (այն կարող եք լրացնել անցնելով հետևյալ հղմամբ https://shirakatsy.am/forms),
- քննավարձի կտրոն,
  **Դիմում-հայտերի ընդունման և ընդունելության գործընթացին մասնակցելու համար սահմանվում է 15,000 ՀՀ դրամ միանվագ վճար (քննավարձ), որը վերադարձման ենթակա չէ: Քննավարձն անհրաժեշտ է փոխանցել Ամիո բանկի տվյալ հաշվեհամարին՝ 1150003768028007:*
  ***Քննավարձից ազատվում են երկկողմանի ծնողազուրկ, զոհված ազատամարտիկների, բազմազավակ (5 և ավելի երեխա ունեցող) ընտանիքների երեխաները, Ճեմարանի մանկակրթարանի ավագ խմբի սաները, իսկ այլ դեպքերում՝ Ընդունող հանձնաժողովի որոշմամբ:*
- դիմորդի ծննդյան վկայական,
- դիմորդի հանրային ծառայության համարանիշ (ՀԾՀ) կամ ՀԾՀ չունենալու մասին տեղեկանք,
- դիմորդի լուսանկար (3x4 չափսի):

Մյուս անհրաժեշտ փաստաթղթերը ենթակա են պարտադիր ներկայացման ընդունվելուց հետո՝ պայմանագիր կնքելուց առաջ: Այդ փաստաթղթերն են՝

- տեղեկանք դիմորդի բնակավայրից,
- քաղվածք դիմորդի ամբուլատոր քարտից կամ տեղեկանք առողջության մասին (026 ձև, առկայության դեպքում), արտերկրից դիմորդների դեպքում՝ բժշկական ապահովագրություն ուսումնառության ժամանակահատվածի համար,
- դիմորդի ծնողների/խնամակալի անձնագրի պատճենները:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Մրցույթով անցած դիմորդների ծնողների հետ կնքվում են կրթական ծառայությունների մատուցման պայմանագրեր:

## 5. ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Հասցե՝ **ք. Երևան, Նոր Նորքի 5-րդ զանգված, Գալշոյան փողոց, 15**
Հեռ.՝ ***+374 10 66 82 81, +374 44 64 01 26***
Էլ. հասցե՝ info@shirakatsy.am, admissionoffice@shirakatsy.am

### ՀԱՎԵԼՎԱԾ

1. Ճեմարանում ընդունելության գործընթացը համակարգվում է Ճեմարանի տնօրենի հրամանով կազմավորված ընդունող հանձնաժողովի կողմից (Ընդունող հանձնաժողով):
2. Սահմանված ժամկետից դուրս ներկայացված դիմում-հայտերին ընթացք տալու որոշումը կայացնում է Ընդունող հանձնաժողովը՝ առանձին դեպքերում:
3. Ընդունելությանն առնչվող բոլոր չնախատեսված հարցերը վճռում է Ընդունող հանձնաժողովը:
4. Փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները ներբեռնվում են դիմումների առցանց գրանցման համակարգում (հղումը տեղադրված է Ճեմարանի պաշտոնական կայքում): Դիմումը համարվում է վավեր, եթե ներբեռնված են դիմումների առցանց գրանցման համակարգում աստղանիշով (*) նշված բոլոր փաստաթղթերը, իսկ ոչ աստղանիշով թվարկված փաստաթղթերը ենթակա են պարտադիր ներկայացման ընդունվելուց հետո՝ պայմանագիր կնքելուց առաջ:
   ***Ուշադրություն.Դիմում-հայտը լրացնելուց հետո համակարգը ավտոմատ կերպով հայտում նշված էլ.հասցեին նամակ է ուղարկում՝ դիմումը հաջողությամբ ընդունվելու մասին:***
5. Սույն փաստաթղթով նախատեսված ժամկետները, ինչպես նաև այլ կարգավորումները կարող են փոխվել ըստ անհրաժեշտության: Փոփոխություններ լինելու դեպքում դրանք կհրապարակվեն www.shirakatsy.am կայքում: